# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՋԵՌՈՒՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՂՄՄԱՆ ՌԱՉՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

**Կանանց փորձառության ուսումնասիրություն**

**Հետազոտող՝ Արևիկ Համբարձումյան**

**2025**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**ՆԱԽԱԲԱՆ** ..... 3

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ** ..... 6

**ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՎՐԱ** ..... 9

**ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ** ..... 12

**ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ..... 17

**ՀՀ ԳՅՈՒՂԱԲՆԱԿ ԿԱՆԱՆՑ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ** ..... 19

- **Կանանց իրազեկվածությունը և պատկերացումները էներգախնայողության և արդյունավետ ջեռուցման համակարգերի մասին** ..... 21
- **Վերականգնվող էներգիայի մասին կանանց պատկերացումները** ..... 22
- **Վառարանի գործարկումը կանայք են ապահովում** ..... 24
- **Վառելիքի հայթայթման վերաբերյալ մտահոգություններ** ..... 26
- **Կանանց ներգրավվածության աստիճանը վառելանյութի հայթայթման գործում** ..... 27
- **Վերջին տարիների նորույթը ջեռուցման ոլորտում քարածուխը և ինքնաշեն փայտի կաթսաներն են** ..... 31
- **Կանայք նախընտրում են վարձատրվող աշխատանք կատարել և վճարել ջեռուցման համար, քան գոմաղբ մշակել** ..... 32
- **Կլիմայի փոփոխության այլ հետևանքների ազդեցությունը կանանց վրա** .. 34

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ** ..... 35

**ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ** ..... 36

**ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ** ..... 39

**ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ** ..... 41

# ՆԱԽԱԲԱՆ

Կլիմայի փոփոխությունը այսօր ամենաարդիական և մարտահրավերներներով լի թեմաներից մեկն է ամբողջ աշխարհում: Այն բազմաշերտ, բարդ միջավայրային և սոցիալական հետևանքներ ունեցող գործընթաց է: Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարման ռազմավարություններում առանցքային տեղ ունեն էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի հայեցակարգերը:

Հայաստանում տնային տնտեսությունների գերակշիռ մեծամասնությունը (90 տոկոսից ավելին) բնական գազն օգտագործում է որպես ջեռուցման եւ սննդի պատրաստման միջոց: ՀՀ տնային տնտեսությունների կեսից ավելին՝ 58.6 տոկոսը չի կարողանում իր կացարանը բավարար չափով ջեռուցել ցուրտ ամիսներին, ինչը Եվրոստատի սահմանման համաձայն, կարող է համարվել էներգետիկ առումով աղքատ: Վառելափայտը որպես ջեռուցման միջոց օգտագործում է գյուղական տնային տնտեսությունների 71 տոկոսը: Վառելափայտը և աթարը մնում են որպես գյուղական տնային տնտեսությունների ջեռուցման ամենատարածված աղբյուրները: Էներգիայի սպառումը տնային տնտեսություններում մեծապես կախված է նրանց կենսամակարդակից և ունի անհավասարության զգալի մակարդակ՝ անհավասարության Ջինիի ինդեքսը 2018 թ.կազմել է 33.9 տոկոս[1]: ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով նախատեսում է նվազեցնել բնական գազի կիրառությունը՝ զարգացնելով կանաչ տնտեսությունը[2]:

«Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի» համաձայն՝ ներքին պահանջարկի բավարարման նպատակով բնական գազի ամբողջական փոխարինումը արեւային էներգիայով՝ ներքին պահանջարկի անփոփոխ պայմաններում կպահանջի վերականգնվող

---

[1] ՀՀ կառավարության որոշում, Էներգախնայողության եվ վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրին, Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի առաջին փուլի իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=161408

[2] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, (2021-2026 թթ.) https://www.gov.am/files/docs/4586.pdf

(բացի հիդրոէներգետիկայից) էներգիայով աշխատող 700 ՄՎտ հզորությամբ կայանների կառուցում:

Ներկա պահին, սահմանված են կանաչ տնտեսության անցման ռազմավարական նպատակները, խստացվել են անտառահատումները, սակայն գյուղական բնակչությունը ապահովված չէ միջնաժամկետ հեռանկարում արդյունավետ, էկոլոգիապես մաքուր ջեռուցման համակարգերով: Եթե գյուղական համայնքներում ջեռուցման արդիական և էներգախնայող մոտեցումներ ներդրված չեն, ջեռուցման հիմնական միջոցները շարունակում են մնալ ավանդական միջոցները՝ փայտը և գոմաղբը, իսկ վերջին տարիներին ավելացել է նաև անվադողերը, որպես ինքնաշեն կաթսաների հիմնական վառելիք, հսկայական բնապահպանական վնաս հասցնելով շրջակա միջավայրին և բնակչության առողջությանը:

Մի կողմից, անտառների պահպանության և կլիմայի փոփոխության վրա ունեցող ազդեցությունները կրճատելու տեսանկյունից կարիք կա խստացնել անտառահատումների վերաբերյալ օրենքները և դրանց կիրառությունը, ինչի հետևանքով փայտը դառնում է դժվար հայթայթվող վառելանյութ, մյուս կողմից, դեռևս զանգվածային ներդրված չեն փայտին փոխարինող էներգիայի աղբյուրներ, իսկ արևային կայանները հասանելի չեն հասարակության խոցելի խմբերին:

ՀՀ գյուղական համայնքներում, հատկապես երկարատև ձմեռ ունեցող շրջաններում, տան ջեռուցման հարցը ամենաառաջնահերթ խնդիրներից է: Մարդիկ ամբողջ տարին զբաղվում են վառելանյութի ստեղծմամբ, հայթայթմամբ և պահեստավորմամբ, երբեմն ձմռանը վառելանյութի առկայությունը սննդի առկայությունից ավելի կարևոր համարելով:

Բացի կլիմայի փոփոխության վրա ունեցած ազդեցությունից, ջեռուցման համակարգերի ոչ արդյունավետ լինելը ազդում է նաև չվարձատրվող աշխատանքի քանակի և դրա վրա ծախսվող հսկայական ժամանակի հետ:

Կանանց վրա ունեցած անհամաչափ հետևանքներից մեկը հենց այստեղ է դրսևորվում, քանի որ կանայք անհամեմատ ավելի շատ են զբաղվում ջեռուցման ապահովման գործերով՝ ամռանը օրերով գոմաղբ չորացնելով և պահեստավորելով, անտառից պարկերով չորուկներ կրելով, և կուբամետրերով

փայտ կոտրատելով, իսկ ձմռանը՝ վառարանի անխափան աշխատանքը ապահովելով (վառարանը ամեն օր վառել, հետևել կրակին, մաքրել և այլն):
Ինչպես կանանց վրա՝ կլիմայի փոփոխության այլ բացասական հետևանքների դեպքում, ջեռուցման դեպքում ևս, այդ անհամաչափ ազդեցության պատճառը կանանց անհամեմատ ավելի շատ խնամքի աշխատանք կատարելն է և ռեսուրսներին անհավասար հասանելիությունը: Ջեռուցման պարագայում, բացի կանանց անհամաչափ ներգրավվածությունից և չվարձատրվող աշխատանք կատարելու մեծ ծավալից, ջեռուցման ոչ արդյունավետ համակարգերի գործունեությունը ունենում է նաև որոշակի առողջական հետևանքներ: Օրինակ՝ տան թերջեռուցումը վառելիքը խնայելու նպատակով: Կանայք հաճախ վառարանը չեն այրում այն ժամանակ, երբ երեխաները դպրոցում են, իսկ իրենք տանը մենակ, վառելիքը խնայելու նպատակով: Բացի դա, վառարանների մեծ մասը ինքնաշեն են, և դրանց աշխատանքի անվնասությունը գնահատելու համար առանձին տեխնիկական հետազոտության կարիք կա:
Հաշվի առնելով թեմայի հրատապությունը, այս աշխատանքի շրջանակենրում ուսումնասիրվել են ՀՀ գյուղական համայնքների կանանց պրակտիկաները ջեռուցման ոլորտում, ինչպես նաև նրանց պատկերացումները և փորձը էներգիայի խնայողության վերաբերյալ: Իրականացվել են 6 ֆոկուս-խմբային քննարկումներ ՀՀ գյուղաբնակ կանանց հետ, որից 2-ը գազաֆիկացում չունեցող համայնքներում: Ձեկույցի շրջանակներում իրականացվել է նաև ոլորտը կարգավորող իրավական կարգավորումների բովանդակային ուսումնասիրություն, և փորձագիտական հարցազրույցներ: Հետազոտության մեթոդաբանությունը, հիմնական բացահայտումները, եզրահանգումները և բարելավման առաջարկները ներկայացված են առանձին գլուխներով: Հետազոտական գործիքները ներկայացված են հավելվածում:

# ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**<u>Հետազոտության նպատակը՝</u>** ՀՀ գյուղական համայնքներում ջեռուցման պրակտիկաների ուսումնասիրությունն է, կանանց վրա ունեցած ազդեցության համատեքստում

**<u>Հետազոտության խնդիրները՝</u>**

1. Պարզել թե ինչպիսին է կանանց իրազեկվածությունը և պատկերացումները էներգախնայողության վերաբերյալ
    a. Արդյունավետ ջեռուցման համակարգերի մասին
    b. Վերականգնվող էներգիայի մասին
2. Պարզել, թե ինչպիսի մտահոգություններ ունեն կանայք ապագայում էներգիայի հասանելիության վերաբերյալ
    a. Գազի
    b. Փայտի և գոմաղբի
    c. Արևային էներգիայի
1. Պարզել, թե ինչպես են փոխվել ջեռուցման պրակտիկաները վերջին 5 տարիների ընթացքում
    a. Փոխվել է արդյոք ջեռուցման հիմնական միջոցները (վառելիքը, ջեռուցման ձևաչափը և այլն)
    b. Ինչպես է փոխվել կանանց վերաբերմունքը ջեռուցմանը, վառելիքի հայթայթման գործում նրանց մասնակցությանը և այլն
    c. Ինչ նոր էներգիայի աղբյուրներ և ջեռուցման ձևաչափեր են հայտնվել
3. Ինչպիսի ջեռուցման պրակտկաներ կան ՀՀ գյուղական համայնքներում և ինչպիսին է կանանց մասնակցությունը ջեռուցման ապահովման աշխատանքներում
    a. Ով է իրականացնում վառելանյութի հայթայթումը և ինչպես
    b. Ով է վառում վառարանը
    c. Ով է օրվա ընթացքում հետևում վառարանի աշխատանքին
    d. Ով է մաքրում վառարանը

4. Ինչպես է ջեռուցման համակարգի արդյունավետությունը և որակը ազդում կանանց առողջության վրա
    a. Կան արդյոք առողջական խնդիրներ, որոնք բժիշկների կողմից հաստատված չեն, սակայն ջեռուցման հետևանքով են /օրինակ՝ թերջեռուցման հետևանքով մրսածություն, աչքերի կարմրություն ծխից, հազ և այլն/
5. Ինչպես է ջեռուցման համակարգի արդյունավետությունը ազդում կանանց առօրիայի և գործունեության վրա
    a. Որքան ժամանակ է խլում վառելայութի հայթայթումը
    b. Ինչպիսի ֆիզիկական ջանքեր է խլում վառելանյութի հայթայթումը
6. Գոհունակությունը ջեռուցման համակարգից
    a. Որքանով է ջեռուցման համակարգը հարմարավետ
    b. Որքան է գոհունակությունը տան ջերմաստիճանից
    c. Որքան է գոհունակությունը տան օդի մաքրությունից
7. Կլիմայի փոփոխության այլ հետևանքների ազդեցությունը կանանց վրա
8. ՀՀ իրավական կարգավորումները կլիմայի փոփոխության և էներգաարդյունավետության վերաբերյալ և դրանցում կանանց վերաբերյալ կետերի առկայությունը
9. Միջազգային իրավական կարգավորումները Կլիմայի փոփոխության և էներգախնայողության վերաբերյալ և դրանցում կանանց վերաբերյալ կետերի առկայությունը

## Մեթոդներ

Հետազոտական հարցերին պատասխանելու համար, առավել նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները:

**Ուլորտը կարգավորող իրավական կարգավորումների վերլուծություն:**

Ուլորտի կարգավորման իրավական հիմքերը պատկերացնելու համար, բովանդակային վերլուծության են ենթարկվել՝

- Կլիմայի փոփոխության վերաբերյալ Փարիզյան համաձայնագիրը,
- ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները,

- Քննարկման փուլում գտնվող կլիմայի վերաբերյալ ՀՀ օրենքը,
- Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագիրը
- Քննարկման փուլում գտնվող 2024-2028թթ. ՀՀ գենդերային ռազմավարությունը

**Ֆոկուս-խմբային քննարկումներ գյուղաբնակ կանանց հետ:**

Կանանց վերաբերմունքը, պատկերացումները, տեղեկատվությունը ջեռուցման և էներգախնայողության վերաբերյալ ուսումնասիրվել է ֆոկուս-խմբային քննարկումների մեթոդով: Այս մեթոդը հնարավորություն է տվել վեր հանել թեմայի վերաբերյալ որակական տեղեկատվություն, խմբային քննարկման միջոցով ամբողջացնել ջեռուցման վերաբերյալ պրակտիկաների պատումը, ստուգել և համալրել տեղեկատվությունը:

Իրականացվել է 6 ֆոկուս-խմբային քննարկում, որից 2-ը Կոտայքի մարզի Բուժական և Սարալանջ գյուղերում: Այս գյուղերը ընգրկվել են որպես չգազաֆիկացված և ցուրտ, երկարատև ձմեռ ունեցող գյուղեր: Մեկ ֆոկուս խմբային քննարկում իրականացվել է Զորավան համայքնում, որը մոտ է վերը նշված 2 գյուղերին, ունի համանման ցուրտ կլիմա, սակայն ի տարբերություն Բուժականի և Սարալանջի՝ գազաֆիկացված է: Մեկ ֆոկուս-խմբային քննարկում իրականացվել է հեռավար եղանակով, ՀՀ տարբեր շրջանների գյուղերից մասնակից կանանցով, ովքեր ունեն Արևային էներգիայի պանելներ: Եվս 2 առցանց ֆոկուս-խմբային քննարկում իրականացվել է ՀՀ տարբեր գյուղերի բնակիչների հետ, տեղեկատվությունը վալիդացնելու, համալրելու և ամբողջացնելու նպատակով:

Յուրաքանչյուր ֆոկուս-խմբային քննարկման մասնակցել է 6-8 մասնակից: Ֆոկուս-խմբային քննարկման ուղեցույցը ներկայացված է Հավելված 1-ում:

**Հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ:**

Ոլորտի վերաբերյալ փորձագիտական տեղեկատվություն ստանալու, օրենսդրական դաշտին ծանոթանալու, ֆոկուս-խմբային քննարկման արդյունքները վալիդացնելու նպատակով, իրականացվել են հարցազրույցներ՝

Արփի Սոլար ընկերության ներկայացուցիչ Աստղիկ Սարգսյանի, ESAC NGO ղեկավար Տիգրան Մկրտչյանի հետ: Հետազոտության ընթացքում կապ է եղել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Կլիմայի փոփոխության վարչության աշխատակիցների հետ, անհրաժեշտ իրավական կարգավորումների ցանկը տրամադրելու և ընթացիկ խորհուրդների համար:

## ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՎՐԱ

(ընդհանուր տեղեկություններ և միջազգային փորձի ուսումնասիրություն)

Կլիմայի փոփոխության հետևանքների մասին խոսելիս, առաջնային գաղափարներից մեկը այդ ազդեցության և հետևանքների արդարության գաղափարն է[3]: Երբ խոսվում է կլիմայի փոփոխության հետևանքների անարդարության մասին, հիմնական միտքը այն է, որ կլիմայի փոփոխությունը անհամաչափ է ազդում մարդկության տարբեր շերտերի վրա:

Արդարությունը կլիմայի ոլորտում նշանակում է, որ կլիմայի փոփոխության գործողությունների և որոշումների հիմքում պետք է դրված լինեն հավասարությունը և մարդու իրավունքները: Կլիմայի փոփոխության բացասական հետևանքների ամենամեծ ազդեցությունը կրում են տարբեր խոցելի խմբերը, այդ թվում երկրագնդի աղքատ բնակչությունը, կանայք և երեխաները, ծերերը, հաշմանդամություն ունեցող անձինք[4]: Մասնագիտական գրականությունում, այս գաղափարը առաջինը առաջ է քաշել սոցիոլոգ Ուիլրիխ Բեկը, իր Ռիսկի հասարակություն գրքում, որտեղ նկարագրել է մարդկանց գործունեության արդյունքում առաջացող էկոլոգիական ճգնաժամերի, աղետների ընդհանուր լինելը ամբողջ մարդկության համար, միաժամանակ ավելի շատ ազդելով երկրագնդի աղքատ և խոցելի բնակչության վրա: «Դրանց հետևանքները քամու միջոցով

---

[3] Why Climate Change Is a Matter of Justice
https://shorturl.at/Tf0VH

[4] Levy B., Jonathan P. Climate Change, Human Rights, and Social Justice, Ann glob Health, 2015 May-Jun, 81(3):310-22
doi: 10.1016/j.aogh.2015.08.008
https://pubmed.ncbi.nlm.nih.gov/26615065/

ճամփորդում են ջրերի վրայով, սննդի միջոցով, կյանքի համար անհրաժեշտ նյութերի հետ, օդի, սննդի, հագուստի, հետ, և ներթափանցում են նույնիսկ մոդեռնի շրջանում խիստ պահպանվող տարածքներ (օրինակ՝ էլիտար թաղամասեր և այլն): Որպես օրինակ, Բեկը բերում է Չեռնոբիլի աղետը, որի հետևանքները չեն ճանաչում սահմաններ, և երկրագնդի որևէ կետում ոչ մի մարդ չի կարող վստահ լինել իր անվտանգության հարցում»: Չնայած նոր տիպի սպառնալիքների համընդհանուր լինելուն, Բեկը այնուամենայնիվ ընդգծում է դրանց անհամաչափ ազդեցությունը տարբեր խավերի վրա: Հետագայում, այս գաղափարները զարգացվել են համակարգային տեսության ներկայացուցիչ Նիկլաս Լումանի և Էնթոնի Գիդենսի կողմից:

Միջազգային կազմակերպությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մեծ կարևորություն տալով այս գաղափարին, տարիների ընթացքում ուսումնասիրեցին և վերլուծեցին կլիմայի փոփոխության անհամաչափ հետևանքները մարդկության վրա: Կարևոր բացահայտումներից մեկը այն էր, որ կլիմայի ճգնաժամը գենդերային առումով չեզոք չէ: Ամբողջ աշխարհում, կանայք ավելի շատ են կախված բնական ռեսուրսներից, սակայն ավելի քիչ հասանելիություն ունեն այդ ռեսուրսներին: Աշխարհի բազմաթիվ տարածաշրջաններում կանայք ավելի մեծ պատասխանատվություն ունեն սննդի, ջրի և վառելիքի ապահովման գործերում: Գյուղատնտեսությունը ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում՝ հատկապես գյուղական բնակավայրերում աշխատանքի ամենակարևոր ոլորտներից մեկն է կանանց համար, իսկ կլիմայի փոփոխությունը առաջինն է ազդում գյուղատնտեսության և հետևաբար կանանց վրա:

ՄԱԿ-ի կանանց հիմնադրամը, բնական աղետների ժամանակ կանանց վնասվելու հավանականությունը ավելի բարձր է գնահատում, բացատրելով դա երկարատև գենդերային անհավասարությամբ, ինչը հանգեցրել է տեղեկատվության, շարժունության, որոշումների կայացման և այլ ռեսուրսների ցածր հասանելիության: Կանայք և աղջիկներն ավելի քիչ են կարողանում օգտվել օգնությունից՝ ինչը սպառնում է նրանց ապրուստին, բարեկեցությանը և ապաքինմանը, ապագա աղետների նկատմամբ նրանց ավելի խոցելի դարձնելով:

Կլիմայի փոփոխության անհավասար ազդեցությունը նախ և առաջ կապվում է ռեսուրսների անհամաչափ բաշխման, դրանց անհամաչափ հասանելիության և աղքատության հետ: ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների հրապարակումներում[5], կլիմայի փոփոխության նկատմամբ կանանց ավելի խոցելի լինելը հաճախ բացատրվում է բուն աղքատությամբ[6]: Աղքատությունը իր հերթին կապվում է կանանց կողմից կատարվող խնամքի աշխատանքի անհամեմատ ավելի մեծ ծավալով: Բնական աղետները դիտարկելով որպես կլիմայի փոփոխության հետևանք (ջրհեղեղներ, գետերի վարումներ), կանայք ավելի խոցելի են համարվում, կապված ֆիզիոլոգիական առանձնահատկությունների հետ: Նույն պատճառով շոգը նույնպես ավելի մեծ բացասական ազդեցություն ունի կանանց և երեխաների վրա:

Գենդերային անհավասարությունը կլիմայի ոլորտում մեղմելու նպատակով, մի քանի հիմնական ուղղություններով իրականացվում են աշխատանքներ[7]՝

- Կլիմայի և շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման տարբեր մակարդակներում կանանց ներգրավումը
- Ռեսուրսները կանանց համար հասանելի դարձնելը

Էներգաարդյունավետության ոլորտը Կլիմայի փոփոխության հարմարման և մեղմման առանցքային ուղղություններից մեկն է, որը ամրագրված է թե ՄԱԿ-ի Փարիզյան միջազգային համաձայնագրով, թե Եվրոպական միության տարբեր փաստաթղթերով, թե ազգային ռազմավարություններով (այդ թվում Հայաստանի): Էներգետիկ ոլորտը ստացել է կլիմայի հետ կապված զարգացման ֆինանսավորման ամենամեծ ծավալները՝ 2017-2021թթ. ծրագրված հիմնական մեղմման միջոցառումների ուղղությամբ (հաշվի առնելով, որ էներգետիկ ոլորտն

---

[5] UNDP Climate Promise, What does gender equality have to do with climate change? 2023
https://shorturl.at/Ggmb4

[6] Global Gender and Climate Alliance, UNDP, Gender and Climate Change, Overview of linkages between gender and climate change
https://shorturl.at/zMqdT

[7] Tackling gender inequality in a climate-changed world
Agrifood and social protection systems can empower women and girls to build climate resilience 2024
https://www.unicef.org/blog/tackling-gender-inequality-climate-changed-world

առավել էական մասնակցություն ունի երկրի ՋԳ (Ջերմոցային Գազեր) արտանետումների ոլորտում): Մեղմման ռազմավարություններում մաքուր էներգիայի աղբյուրների անցումը, էներգատարության կրճատումը արդյունավետության սխեմաների և պատասխանատու սպառման միջոցով, ներառված է տարբեր երկրների կլիմայի քաղաքականություններում, օրինակ Մեքսիկայի: Անտառների պահպանումը և արդյունավետ անտառային տնտեսությունների վարման գործելակերպը նույնպես ներառված է կլիմայի փոփոխության մեղմման ռազմավարություններում, որպես ածխածնի բնական կլանիչների ավելացման միջոց:

Այստեղ նույնպես, կանայք համարվում են ավելի խոցելի՝ թե ջեռուցման ոչ արդյունավետ և առողջության համար վնասակար համակարգերի հետևանքների առումով, թե՛ էներգախնայողության տեսանկյունից ավելի խնայող լինելու առումով, թե ջեռուցման ապահովման չվարձատրվող աշխատանքներում մեծ ներգրավվածություն ունենալու առումով, թե՛ էներգաարդյունավետության. Ոլորտում մասնագիտական լուծումների և որոշումների կայացման մակարդակում ընդգրկված լինելու անհրաժեշտության առումով:

## ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կլիմայի փոփոխության վերաբերյալ իրավական կարգավորումները կարող ենք բաժանել 3 խմբի՝ բազմակողմ համաձայնագրեր, Համագործակցություն ԵՄ հետ, Ազգային իրավական կարգավորումներ: Հայաստանը 1993թ. միացել է Միացյալ ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիային, 2002թ. Վավերացրել է Կիոտոյի արձանագրությունը, իսկ 2017թ. Փարիզյան համաձայնագիրը: Կոնվենցիայով և Փարիզյան համաձայնագրով ամրագրվել են Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող ներդրումներ 2015-2050 թվականների համար:

Ըստ ԱՍԳ-ի(Ազգային մակարդակով սահմանված գործողություններ/ներդրումներ) (Armenia, 2021) Հայաստանի Հանրապետությունը նպատակադրվել է մինչեւ 2050 թվականը հասնել էկոհամակարգային չեզոք ջերմոցային գազերի

արտանետումների (տարեկան 2,07 տոննա/մեկ շնչին)՝ համապատասխան միջազգային ֆինանսական, տեխնոլոգիական եւ կարողությունների զարգացման աջակցության պայմանով[8]:

Տեղական օրենսդրության առումով, բուն **կլիմայի վերաբերյալ ՀՀ օրենքը դեռևս քննարկումների փուլում** է: Օրենքի նախնական տարբերակը տեղադրված է ՀՀ Արդարադատության նախարարության Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում: Օրենքի նախագիծը , իր Գլուխ 2-ի Հոդված 5-ի 1-ին կետով սահմանում է Կլիմայական քաղաքականության հիմնական սկզբունքները: Սկզբունքների մեջ զգալի տեղ ունի կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության նպատակադրումների սահմանումը: Օրենքի նախագծում մեղմումը սահմանված է որպես՝ տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների ամբողջություն՝ ուղղված ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը կամ կլանիչների ընդլայնմանը կամ զարգացմանը: Իսկ հարմարվողականությունը՝ որպես կլիմայի փաստացի և կանխատեսվող փոփոխությանը հարմարվելու կարողություն՝ վնասները նվազեցնելու, անբարենպաստ հետևանքները մեղմելու և հնարավորություններից օգտվելու համար:

Որպես մեղմման ոլորտներ, օրենքի նախագծում նշված են կոնվենցիայով սահմանված ոլորտներ, ներառյալ էներգիայի արտադրությունը և սպառումը: Մեղմման ոլորտներից է նաև անտառային տնտեսությունը, անտառապատումը, անտառավերականգնումը, անտառների պահպանությունը: Հարմարվողականության ոլորտներում նույնպես ներառված են անտառտնտեսությունը և էներգետիկան:

Վերականգնվող էներգիայի ոլորտի զարգացումը և էներգախնայողությունը առնչվում են նաև **ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին,** մասնավորապես՝ 7-րդ նպատակին, բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և

[8] Կլիմայի փոփոխության չափումների, հաշվետվայնության և հավաստագրման (ՉՀՀ) հարթակի նախագծման համար նախապատրաստական տեղեկատվության մշակում, Վերջնական հաշվետվություն ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի համար(CBIT ծրագիր) https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/2024-09/mrv_framework_armenia_report_am.pdf

արդիական էներգիայի հասանելիության ապահովմամբ: Կայուն զարգացման 7-րդ նպատակի հաջորդ շեշտադրումը վերաբերում է էներգիայի վերջնական սպառման մեջ վերականգնվող էներգիայի մասնաբաժնի ավելացմանը: Որպես վերականգնվող էներգիայի աղբյուրներ են մատնանշվում հիդրո, արևային և հողմային էներգիան, պինդ և հեղուկ կենսավառելիքները, երկրաջերմային և ծովային էներգիան, թափոնները:

ՀՀ-ն ունի **Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագիր,** որը նպատակ է ունի առաջիկա տասը տարիների ընթացքում բարելավել Հայաստանի տնտեսության էներգաարդյունավետությունն ու խրախուսել էներգախնայողությունը, ինչպես նաև ընդլայնել վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը՝ որպես էներգետիկ անվտանգության ու հուսալիության բարձրացման և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման միջոց: Վերականգնվող էներգետիկայի հետագա զարգացումը դիտվում է էներգետիկայի ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության առանցքային ուղղվածություն հանդիսացող էներգետիկ անկախության ու անվտանգության մակարդակի բարձրացման, ինչպես նաև սպառողներին էլեկտրաէներգիայի հուսալի և որակյալ մատակարարման ապահովման կարևոր գրավական:

Ծրագրային ժամանակահատվածում հատուկ շեշտադրվելու է վերականգնվող էներգիայի արդիական աղբյուրների (արևային, հողմային, գեոթերմալ) օգտագործմամբ էլեկտրաէներգիայի արտադրության ընդլայնումը:

Էներգախնայողության գծով թիրախները սահմանվել են՝ դիտարկելով քաղաքականությունների և բազային սցենարներին համապատասխանող առաջնային էներգիայի մատակարարման և ընդամենը վերջնական էներգիայի սպառման ցուցանիշների միջև տարբերությունները:

## ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՍՊԵԿՏԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ

**Կլիմայի փոփոխության մասին Փարիզի համաձայնագրում,** գենդերին վերաբերող ասպեկտը ամրագրված է մի քանի դրույթներում: Մասնավորապես,

Հոդված 7-ի 5-րդ կետում, նշված է. «Կողմերն ընդունում են, որ հարմարվողականության միջոցառումները պետք է իրականացվեն պետության նախաձեռնությամբ, գենդերային հավասարության, մասնակցային և լիակատար թափանցիկ մոտեցման հիման վրա՝ հաշվի առնելով խոցելի խմբերը, համայնքներն ու էկոհամակարգերը, և պետք է հիմնված լինեն առկա առաջադեմ գիտելիքների և, ըստ նպատակահարմարության, ավանդական գիտելիքների, բնիկ ժողովուրդների գիտելիքների ու գիտելիքների տեղական համակարգերի վրա, և առաջնորդվեն դրանցով՝ նպատակ ունենալով հարմարվողականությունը ներառել համապատասխան սոցիալ-տնտեսական և բնապահպանական քաղաքականության և գործողությունների շրջանակում՝ ըստ նպատակահարմարության»:

Իսկ Հոդված 11-ի 2-րդ կետում, նշված է. «Կարողությունների զարգացումը պետք է լինի պետության նախաձեռնությամբ, հիմնված լինի ազգային կարիքների վրա, արձագանքի դրանց և խթանի Կողմերի, մասնավորապես՝ զարգացող երկիր հանդիսացող Կողմերի՝ իրենց երկրների նկատմամբ սեփականատիրոջ զգացման ձևավորումը՝ ներառելով ազգային, ենթաազգային և տեղական մակարդակները: Կարողությունների զարգացումը պետք է ուղղորդվի քաղված դասերով, այդ թվում՝ Կոնվենցիայի ներքո կարողությունների զարգացման գործողությունների ներքո քաղված դասերով, և պետք է լինի արդյունավետ, պարբերական գործընթաց, որը մասնակցային, համալիր գործընթաց է և հաշվի է առնում գենդերային ասպեկտները»:

**Կլիմայի մասին ՀՀ օրենքի նախագծում**, գենդերին անդրադարձ կա օրենքի սկզբունքներում: Մասնավորապես, Հոդված 5-ի 9-րդ կետում, որպես սկզբունք սահմանված է՝ «գենդերային զգայունությունը, գենդերային արձագանքումը և սոցիալական ներառականությունը»: Իսկ կլիմայական քաղաքականության խնդիրներում, 13-րդ կետով նշվում է «բարձրացնել կլիմայական քաղաքականության գենդերային զգայունությունը և գենդերային արձագանքումը»:

**2024-2028թթ. ՀՀ գենդերային ռազմավարությունում,** որը դեռևս քննարկման փուլում է, որպես Գերակայություն սահմանված է «Կլիմայի փոփոխության նկատմամբ գենդերազգայուն և գենդերաարձագանքող մոտեցումների ձևավորում, ներառական սկզբունքների ապահովում և իրազեկվածության բարձրացում»: Կլիմայի փոփոխության հետ կապված հիմնախնդիրները, ինչպես նաև պետության կողմից դրանց արձագանքելու ռազմավարական մոտեցումներն առաջին անգամ են արտացոլվում գենդերային ռազմավարության շրջանակում՝ որպես գերակա ուղղություն:

Գենդերային ռազմավարությունում անդրադարձ կա նաև էներգաարդյունավետությանը և այդ ոլորտում կանանց դերակատարության հարցին: Մասնավորապես, որպես ռազմավարական նպատակներում նշված է՝ «Էներգախնայողության և այլընտրանքային էներգիայի ոլորտներում կանանց մասնագիտացման և ստեղծարար աշխատանքի ներգրավվածության մակարդակի բարձրացում»:

Մասնավորապես, նշվում է՝ կլիմայի փոփոխության ազդեցությամբ պայմանավորված խնդիրներն առաջ են բերում, ինչպես բնապահպանական նորանոր լուծումների կիրառում, այնպես էլ էներգախնայող միջոցների օգտագործման, այլընտրանքային էներգետիկ լուծումների մշակման և կիրառման հանրայնացման առաջնահերթություն: Ընդհանուր առմամբ էներգետիկ անվտանգության և էներգետիկ համակարգերում կանանց մասնակցությունը բավականին ցածր է ամբողջ աշխարհում: Էներգիայի միջազգային գործակալության տվյալների համաձայն՝ կանայք ունեն միայն 22% մասնակցություն: Հայաստանում Հանրապետությունում աղջիկների համեմատականորեն ցածր ներկայացվածությունը գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության, ինժեներության և մաթեմատիկայի բնագավառներում սահմանափակում է հետագայում նրանց մասնակցությունը և ստեղծագործական գործունեությունն էներգիայի և ենթակառուցվածքների հարմարավողականության ապահովման նորարարական աշխատաշուկաներում:

# ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին տարիներին ՀՀ-ում իրականացվել են մի շարք հետազոտություններ, էներգախնայողության և էներգաարդյունավետության թեմաներով: Դրանց մի խումբը վերաբերում է ոլորտի իրավական կարգավորումների ուսումնասիրությանը, Փարիզի համաձայնագրի իրագործման հիմքերի ուսումնասիրությանը և քարտեզագրմանը, ՀՀ քաղաքային բնակավայրերի էներգաարդյունավետության պոտենցիալի չափմանը, գյուղական համայնքներում էներգախնայողության պրակտիկաների ուսումնասիրությանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, Շրջակա Միջավայրի կայունության աջակցման ՀԿ-ի և Գերմանական համագործակցության կողմից 2021թ. իրականացվել է ուսումնասիրություն[9], Հայաստանի Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերի պիլոտային համայնքներում ջեռուցման համար օգտագործվող էներգիայի և դրան առնչվող հարցերի վերաբերյալ: Ուսումնասիրությունը ներառել է ջեռուցման վառելիքի եւ սարքերի խնդիրները, մոտեցումները, նախընտրությունները, այլընտրանքներն ու առնչվող թեմաները, կարիքներն ու առաջնահերթությունները, սոցիալ- տնտեսական ասպեկտները, ինչպես նաեւ ջեռուցման էներգիայի հետ կապված գենդերային եւ առողջական խնդիրները:

2020-ին մշակվել է Կլիմայի փոփոխության վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզը[10], ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի

---

[9] Սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն, Հայաստանի Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերի պիլոտային համայնքներում ջեռուցման համար օգտագործվող էներգիայի և դրան առնչվող հարցերի վերաբերյալ https://biodivers-southcaucasus.org/uploads/files/Socio-economic%20survey_arm_03.06.2021.pdf

[10] Հայաստան. Կլիմայի փոփոխության վիճակագրական զարգացման ճանապարհային քարտեզ, 2020 https://armstat.am/file/doc/99518218.pdf

վիճակագրական ստորաբաժանման օժանդակությամբ: Ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներն իրականացվել են հետեւյալ սխեմայով.

- միջոցառումների առաջնահերթությունների սահմանում,
- ոլորտային գործողությունների սահմանում,
- վարչական ռեգիստրների բարելավման հասցեական միջացառումներ,
- միջոցառումների իրականացման գործիքակազմի եւ մեխանիզմների մշակում եւ ներդնում,
- աշխատանքների իրականացման մշտադիտարկում, արդյունքների գնահատում,
- տեղեկատվության որակի, թափանցիկության, մատչելիության եւ անընդհատ հոսքերի ապահովում:

2022-ին մշակվել է ծավալուն զեկույց, ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի անունից, Carbon Limits AS ընկերության կողմից՝ Spherical ընկերության հետ համագործակցությամբ[11]: «Կլիմայի փոփոխության չափման, հաշվետվայնություն եւ հավաստագրման (ՉՀՀ) հարթակի նախագծման համար նախապատրաստական տեղեկատվության մշակում» ծրագրի նպատակը նպատակը Փարիզի համաձայնագրի 13-րդ հոդվածում սահմանված կարգով Հայաստանին ներկայացվող թափանցիկության ընդլայնված պահանջների կատարումը ապահովելն է՝ արտանետումների, մեղմման եւ հարմարվողականության միջոցառումների եւ ստացված աջակցության չափման եւ ներկայացման ուղղությամբ ինստիտուցիոնալ եւ տեխնիկական կարողությունների հզորացման միջոցով:

2020-ին իրականացվել է նաև ՀՀ Բնակելի եւ հանրային շենքերի էներգաարդյունավետության ներուժի գնահատման հետազոտությունը,

[11] Կլիմայի փոփոխության չափումների, հաշվետվայնության եւ հավաստագրման (ՉՀՀ) հարթակի նախագծման համար նախապատրաստական տեղեկատվության մշակում
Վերջնական հաշվետվություն ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի համար (CBIT ծրագիր)
https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/2024-09/mrv_framework_armenia_report_am.pdf

Ամերիկյան Համալսարանի Հակոբեան Բնապահպանական Կենտրոն Հայաստանի հետազոտող՝ Աստղինե Պասոյանի կողմից[12]:

Կլիմայի փոփոխության, մեղմման և հարմարման ուղղությունների վերաբերյալ պարբերական ուսումնասիրություններ է իրականացնում Էկոլուր ՀԿ-ն: 2024-ին իրականացվել է՝ Համայնքային մակարդակում կլիմայական եվ էներգետիկայի քաղաքականությունների տեղայնացման վերլուծություն[13], որի շրջանակներում ուսումնասիրվել են՝ 4 թիրախ համայնքներում՝ Արագածոտնի մարզի Թալին, Տավուշի մարզի Դիլիջան, Վայոց ձորի մարզի Եղեգիս եւ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքներում: Ուսումնասիրվել են ընկալումները, պատրաստակամությունը եւ հնարավորությունները էներգետիկայի եւ կլիմայի փոփոխության քաղաքականությունների իրականացման տեսանկյունից: Ուսումնասիրվել է նաև կլիմայական եւ էներգետիկայի ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրությունը, ՀՀ կառավարության որոշումները, քաղաքականությունները, ռազմավարությունները եւ ծրագրերը, միջազգային, այդ թվում՝ Փարիզյան համաձայնագրի, ՀԸԳՀ-ի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարմանը ներգրավվածությունը, ԵՄ Քաղաքապետերի դաշնագրին միանալու եւ ԿԷԿԳԾ գործիքի ներդրման պատրաստակամությունը եւ միանալու դեպքում հնարավոր ծրագրերի իրականացումը:

## ՀՀ ԳՅՈՒՂԱԲՆԱԿ ԿԱՆԱՆՑ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

[12] Պասոյան Ա., Ամերիկյան Համալսարանի Հակոբեան Բնապահպանական Կենտրոն Հայաստան, 2020 https://ace.aua.am/files/2016/08/Day-3_Building-EE-Market-Potential.pdf

[13] ԷկոԼուր տեղեկատվական ՀԿ, համայնքային մակարդակում կլիմայական եվ էներգետիկայի քաղաքականությունների տեղայնացման վերլուծություն https://www.ecolur.org/files/uploads/2024/Brot%20report/ecolurfinalreport2024compressed.pdf

Ջեռուցման համակարգերի կապը կլիմայի փոփոխության հետ, նախ և առաջ կապված է ջեռուցման ոչ արդյունավետ, ոչ էներգախնայող համակարգերի գործածության հետ: Կլիմայի փոփոխության մեղմման ռազմավարություններում, էներգախնայողությունը և վառելիքի մաքուր և վերականգնվող տեսակներին անցումը առանցքային լուծումներն են:

Մեր դեպքում, հատկապես չգազաֆիկացված գյուղական համայնքներում ջեռուցումը մեծամասամբ իրականացվում է փայտով և գոմաղբով (վերջին տարիներին ավելացել է նաև քարածուխը, իսկ ինքնաշեն կաթսաների դեպքում նաև անվադողերը): Սա մի կողմից ենթադրում է ծառահատումներ և անտառային տարածությունների փոքրացում, մյուս կողմից՝ գոմաղբի սպառում որպես վառելանյութ, որը այլ պայմաններում կարող էր արժեքավոր պարարտանյութ լինել: Ջեռուցման հարցը շատ կարևոր է գյուղական համայնքներում, հատկապես ցուրտ կլիմա և երկարատև ձմեռ ունեցող շրջաններում: Մարդիկ հաճախ ամբողջ տարին զբաղվում են վառելանյութի տարբեր տեսակների հավաքմամբ, պահեստավորմամբ: Կոտայքի մարզի Սարալանջ և Բուժական գյուղերում, որտեղ գյուղաբնակների խոսքով տան ջեռուցումը սկսում են հոկտեմբերից, և ավարտում մայիսի վերջին, վառելիքի և ջեռուցման հարցը առաջնահերթ է: Որոշ գյուղաբնակներ, ջեռուցումը ավելի են կարևորել, քան սնունդը: Ավելի լավ է քաղցած լինել, բայց չմրսել:

*Կարողա մեր բերանից կտրենք հաց, բայց վառելիքը անպայման պետքա անենք: Մենք քիչ ենք, տարածքը փոքր է, 120-130.000 կարող է տանք վառելիքին, փայտ, ածուխ, բայց մեծ տներում կարողա 500.000-ի էլ հասնի վառելիքը:*

Կին, Գյուղ Սարալանջ

Նաև, հաշվի առնելով փայտի և աթարի վառարանների, կաթսաների ինքնաշեն լինելը, դեռևս առանձին տեխնիկական հետազոտության կարիք կա պարզելու համար, թե որքանով են դրանք էներգաարդյունավետ և խնայող, և նույնիսկ եթե փայտով են ջեռուցվում, արդյոք այնպես են պատրաստված, որ ծուխ և այլ վտանագվոր արտանետումներ այրումից չառաջանան:

## Կանանց իրազեկվածությունը և պատկերացումները էներգախնայողության և արդյունավետ ջեռուցման համակարգերի մասին

Անցումը արդյունավետ էներգիայի տեսակներին և էներգախնայող մոտեցումներին, թե՛ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներով, թե՛ Փարիզի համաձայնագրով և թե՛ ՀՀ էներգախնայողության ռազմավարությամբ սահմանված է որպես կլիմայի փոփոխության մեղմման կարևոր լուծումներից մեկը: Այստեղ մեծ է կանանց դերը, քանի որ կանայք, ամբողջ աշխարհում ավելի հակված են խնայողության քան տղամարդիկ, այդ թվում էներգախնայողության որտում:

Սակայն, հետազոտությունը փաստում է, որ գյուղական համայնքներում էներգիայի խնայողությունը իրականացվում է ոչ թե էներգախնայող լուծումների միջոցով, ինչպիսիք են էներգախնայող սարքերի գործածումը, տան ջերմամեկուսացումը (պատուհանների, հատակի, տանիքի) և այլն, այլ պարզապես տունը սակավ ջեռուցելով:

Կանայք պատմում են, որ հակված են վառելիքը խնայել, երբ տանը մենակ են: Երբ երեխաները դպրոցում են, իսկ ամուսինը աշխատանքի, կինը կարող է վառարանը չվառել, կամ կրակը թուլացնել: Հարցին, թե արդյոք չեն մրսում թերջեռուցման հետևանքով, հաճախ նշում են, որ՝

*ամբողջ օրը վազվզում ենք, մրսելու ժամանակ չունենք:*

Կին, Գյուղ Զորավան

Չեն կարողանում խնայել, երբ փոքր երեխաներ ունեն: Հաճախ նաև նշում են, որ էներգիան խնայելու համար ուշ են արթնանում և շուտ քնում, ինչպես նաև տան սենյակների մի մասը փակում են: Օրինակ՝ երկհարկանի տան դեպքում, ձմռանը օգտագործում են միայն մեկ հարկը: Հարցին, արդյոք կանայք են ավելի հակված վառելիքը խնայել, թե տղամարդիկ, կանայք պատասխանում են

*Իհարկե կանայք, եթե տանը մենակ է, կարող ա լրիվ անջատի ջեռուցումը:*

*Հայ կանայք չեն կարող չխնայել:*

*Տղամարդիկ պառկում են բազմոցին և մրսում են...(կատակում է)*

Կին, Գյուղ Զորավան

## Վերականգնվող էներգիայի մասին կանանց պատկերացումները

Արևային պանելների վերաբերյալ կանանց պատկերացումները բավականին տարբերվող են: Արևային էներգիայի ոլորտում Հայաստանյան առաջատար ընկերություններից մեկը, փորձագիտական հարցազրույցում նշել է, որ հայ հասարակության շրջանում արևային էներգիայի վերաբերյալ իրազեկվածությունը բավականին աճել է, և տարեց տարի ավելանում է այն ընտանիքների թիվը, որոնք արևային պանելներ են ձեռք բերում:

**Նկար 1. Արևային կայաններ Զորավան գյուղում**

Հետաքրքրական է, որ այն կանայք, ովքեր արդեն իսկ ունեն արևային տաքացուցիչ, բավականին գոհ են դրանց աշխատանքից, և համարում են, որ ներդրումը լիովին արդարացրել է իրեն: Իսկ այն կանայք, ովքեր դեռևս չեն փորձել արևային տաքացուցիչների աշխատանքը, ունեն մի շարք հարցեր և մտահոգություններ, դրանց արժեքի և կատարված ներդրման արդարացվածության վերաբերյալ: Ստորև քննարկենք այս հարցը ավելի մանրամասն:

Արևային տաքացուցիչներ ունեցող կանայք գոհունակություն են հայտնել տաքացուցիչների աշխատանքի վերաբերյալ և նշել, որ դրանց աշխատանքի արդյունքում տունը շատ տաք է, մաքուր և հարմար:

**Նկար 2. Արևային Կայան Սարալանջ գյուղում**

Արևային պանելներ ունեցող կանանցից մեկի խոսքով, 2018-ին վարկով ձեռք բերված պանելը 2024-ին արդեն միանգամայն արդարացրել է իրեն: Ճիշտ է, պանելը օգտագործվում է միայն ջրատաքացման համար, այնուամենայնիվ այն լիարժեք արդարացրել է բոլոր սպասելիքները, և նույնիսկ վերադարձրել վարկի տոկոսները: Բազմանդամ ընտանիքը նախկինում ջրատաքացման համար գեյզեր է օգտագործել, ինչը շատ ավելի ծախսատար է եղել, քան արևային էներգիայով ջրի տաքացումը:

Մեկ այլ կին, ում տեղադրած պանելները ծառայել են ջեռուցման համար, նշել է, որ այս տարի տան ջեռուցումն իրականացրել են միայն արևային էներգիայով, առանց գազի, հոսանքի կամ փայտի վառարանի օգնության:

Ներկայացնենք արևային պանելներ չունեցող ընտանիքների և կանանց մտահոգությունները: Կան որոշ մտավախություններ, օրինակ այն հարցի շուրջ, թե արդյոք Հայաստանի Էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ն շարունակաբար կգնի իրենց արտադրած էներգիան, թե ինչ որ պահից կդադարեցնի, եթե արևային պանելներ տեղադրած մարդկանց քանակը շատ մեծանա:

Կանայք լավ չեն պատկերացնում նաև, թե ինչպիսի նախնական ֆինանսական ներդրում է պահանջում արևային պանելների տեղադրումը: Որքան ժամանակում է կատարված ներդրումը սկսում աշխատել իրենց օգտին: Ինչ տոկոսադրույքով վարկ կարող են ստանալ և արդյոք դա իսկապես ձեռնտու կլինի:

Կանանց խոսքով, որպեսզի արևային տաքացուցիչը կարողանա ջեռուցել տունը, այլ ոչ միայն տաքացնել ջուրը, հավելյալ պանելներ են պետք, ինչը հավելյալ ֆինանսական ներդրում է պահանջում:

Կանայք, չնայած շատ դրական վերաբերմունք ունեն արևային էներգիայով ջեռուցման գաղափարին, այնուամենայնիվ նշում են, որ դրա համար պահանջվող նախնական կապիտալը բավականին մեծ է, և ոչ բոլորին է հասանելի: Կանանց խոսքով, արևային էներգիայով ջեռուցման համար պետք են օդորակիչներ կամ այլ սարքեր, որոնց ձեռքբերումը նույնպես նախնական կապիտալ է պահանջում:

Արևային էներգիայով ջեռուցման դրական ընկալումներից մեկը կապված է արևային ջրատաքացուցիչների և պանելների մաքրության հետ: Կանանց համար ջեռուցման համակարգի մաքուր աշխատանքը շատ կարևոր է (փայտի և գոմաղբի վառարանը նրանց խոսքով շատ է աղտոտում տունը, պատերը, հատակը, վերանորոգումը և այլն): Կանայք նաև նշել են, որ իրենց տեղեկություններով, արևային էներգիան ձեռնտու է այն դեպքերում, եթե հոսանքով աշխատող շատ տեխնիկաներ կան, ինչպես խանութի կամ արտադրամասի դեպքում է: Տան համար կարծես թե այդքան էլ ձեռնտու չէ:

Մեկ այլ մտավախություն է արևային պանելների աշխատանքի եղանակային պայմաններից կախված լինելը: Կանայք մտածում են, թե արդյոք արևային պանելները ունակ են ամբողջ տարին էներգիա արտադրել, անկախ ակտիվ արևի առկայությունից:

## Վառարանի գործարկումը կանայք են ապահովում

Բազմաթիվ կանայք նշել են, որ վառարանը առավոտյան վառողը հենց իրենք են: Օրվա ընթացքում նույնպես, կանայք են հետևում կրակին: Հաճախ կանայք են իրականացնում նաև վառարանի մաքրումը: Հետաքրքիր է, որ Շիրակի և Լոռու մարզերից կանայք ավելի շատ են նշել, որ իրենք են ամբողջությամբ իրականացնում վառարանի մաքրությունը, մինչդեռ Կոտայքի մարզում կանայք նշել են, որ վառարանի վառումը և մաքրումը իրականացվում է գրեթե հավասարապես, ով այդ պահին կլինի տանը, կամ ում ավելի հարմար կլինի:

Կանայք նաև պատմում են, որ ջեռուցումը այնքան մեծ կարևորություն ունի իրենց համայնքներում, որ հաճախ ամբողջ ընտանիքով են զբաղվում վառարանի գործարկմանը, նույնիսկ երեխաները կարող են ընթացքում փայտ գցել վառարանը:

*Երեխեն էլ կարա անցնի, փայտ գցի, եթե կրակը թուլացել է: Ամբողջ ընտանիքով դրա մեջ ենք*

Կին, Գյուղ Սարալանջ

**Նկար 3. Փայտի վառարան, Բուժական գյուղում**

Այստեղ կարևոր է հիշել, որ գյուղերում վառարանների մեծ մասը ինքնաշեն են, և հաճախ ծուխը ամբողջությամբ չի քաշում: Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակից կանանցից շատերը նշել են, որ թե՛ իրենք, թե՛ ընտանիքի անդամները ունեն առողջության հետ կապված որոշակի դժգոհություններ, որոնք կապում են վառարանի ոչ արդյունավետ աշխատանքի, խողովակներից դեպի ներս լցվող ծխի հետ: Օրինակ՝ կարմրած և բորբոքված աչքեր, շնչուղիների խնդիրներ, մաշկի չորություն և այլն: Այս առումով, շատ հաճախակի մաքրում են նաև խողովակները ծխի ներհոսքից խուսափելու համար:

## Վառելիքի հայթայթման վերաբերյալ մտահոգություններ

Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակից գրեթե բոլոր կանայք մտահոգություններ ունեն ապագայում վառելիքի հասանելիության հետ: Նախ՝ փայտի հայթայթումը գնալով դժվարանում է, կապված անտառահատումների վերաբերյալ խստացումների հետ: Սակայն, կանայք նաև շատ լավ գիտակցում են անտառահատումների վտանգը շրջակա միջավայրին հասցվող վնասի և կլիմայի փոփոխության տեսանկյունից: Տեսական մտահոգություններ կանայք ունեն նաև գազի և քարածուխի հասանելության առումով, քանի որ երկուսն էլ ներկրվում են արտերկրից, և ցանկացած պահի կարող է դադարեցվել դրանց ներմուծումը Հայաստան, կամ այնքան թանկանան, որ հասանելի չլինեն: Գոմաղբի հետ կապված նույնպես կա մտահոգություն, քանի որ գնալով նվազում է անասնապահությամբ զբաղվող մարդկանց թիվը:

Դժվարացել է նաև (օրենքով թույլատրվող) անտառից չորուկների և թափուկների հավաքումը, ինչը մի կողմից սանիտարական նշանակություն ունի անտառի համար, մյուս կողմից գյուղաբնակների, հատկապես խոցելի խմբերի համար որոշակի վառելիք է ապահովում:

Կանանց խոսքով, ներկայումս թափուկների հավաքումը դժվարացել է, քանի որ անտառի սկզբնական հատվածի թափուկները ամբողջությամբ հավաքել են, և հիմա պետք է անտառի խորքը գնալ նոր թափուկներ գտնելու համար: Նախ, դժվար է այդ ծանր թափուկները երկար տարածություն քաշ տալ, և ոչ բոլորը ունեն մեքենա, իսկ մյուս կողմից վերջին տարիներին անտառները ավելի սաղարթախիտ են դարձել, և դժվար է նաև այդքան խորանալը:

Ոչ հաճախ, բայց կան նաև դեպքեր, երբ կանայք մի կողմից գիտակցում են անտառահատումների վտանգը շրջակա միջավայրի էկոհամակարգի տեսանկյունից, մյուս կողմից այնքան սովոր են տունը փայտով ջեռուցելուն, որ մեծ դժվարությամբ են ընդունում այլ, ավելի ժամանակակից վառելանյութերի անցնելու գաղափարը: Կարծում են, որ փայտի պես ոչինչ չի կարող տաքացնել:

Այստեղ կարիք կա էներգիայի նոր և վերականգնվող տեսակների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման: Ավելի նորարարական և այլընտրանքային ջեռուցման միջոցներ, մասնակիցների միայն մի փոքր մասն է փորձել, օրինակ՝ ծղոտե աղյուսները: Կանայք նշում են, որ ծղոտե աղյուսները մաքուր վառելիք են, սակայն շատ արագ են վառվում և ֆինանսապես ձեռնտու չեն: Արևային էներգիան, գերակշիռ մեծամասնությամբ համարվել է որպես ամենաարդյունավետ էներգիայի աղբյուրը: Այս առումով, կանայք թեև շատ են ցանկանում ունենալ նման ջեռուցման համակարգ, սակայն ունեն նախնական կապիտալի և տեղեկատվության պակաս, այն ներդնելու համար:

## Կանանց ներգրավվածության աստիճանը վառելանյութի հայթայթման գործում

Նախ, գրեթե բոլոր գյուղերում իրականացված ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ կանայք փաստեցին, որ վերջին 5 տարիներին վառելանյութի հայթայթման գործում կանանց մասնակցությունը իջել է: Նախկինում կանայք ավելի շատ են փայտ կրել, գոմաղբ չորացրել, փայտ դասավորել:

*Նախկինում, ես իմ կին հալով, տղամարդկանց հետ, էնքան փեդ ենք հանել ձորից, մեծ, հաստ ցախերը ձորից հանել ենք դուրս, մի 300 մետր դրել մեր ուսին գնացել ենք, որ արդեն դուրս գանք ճամփեն, ավտոյին հասնենք, որ երեխեքը փոքր էին էն ժամանակ, տաքանային: Հիմա, մի 5 տարի առաջ արդեն մի քիչ մեղմացել է մեր վիճակը, մի քիչ հեշտացել է: Էլ անտառից, սարից փետ կարող ենք չբերել, հիմա մի կերպ վաստակում ենք, պիտի առնես, բայց էդ փողը ստեղծելն էլ հեշտ չի, մի կերպ, ուրիշ աշխատանքներ ես անում, մինչև էդ փողը վաստակում ես, որ վառելափայտ առնես:*

Կին, Գյուղ Սարալանջ

*Գոմաղբի չորացումը... շատ քիչ տղամարդ կա, որ դրանով կզբաղվի... Գոմաղբը չէ, թրիքը: Թարմը թրիքը:*

Կին, Գյուղ Զորավան

Թեև ներկայում իրադրությունը մի փոքր փոխվել է, և անտառից ինքնուրույն փայտ կրելու պրակտիկաները նվազել են, այնուամենայնիվ, օրինակ՝ Լոռու մարզի որոշ գյուղերում, կանայք դեռևս զգալի ներգրավվածություն ունեն վառելիքի բոլոր տեսակների հայթայթման գործում: Հաճախ կանայք մեծ և երկարատև ֆիզիկական աշխատանք են կատարում՝ անտառից չորուկներ հավաքելով և պարկերով կրելով տուն: Հազվագյուտ դեպքեր չեն նաև գնված կուբամետրերով փայտը ամբողջ ամառ քիչ-քիչ կոտրատելը և դասավորելը, օրեր, իսկ երբեմն նաև շաբաթներ շարունակ:

*Նախկինում, որ երեխեքս փոքր էին, ամուսինս էլ Ռուսաստանում էր, մի ամբողջ ավտո ցանը (աթարը) բարձում էի, բերում, դատարկում հայաթում, սարքում ցան, շատ դժվարությամբ: Փառք Աստծո, հիմա դու էլ ես մեծանում, հասկանում ես որ կարելի ա ավելի հեշտ: Չես համեմատի 5 տարի առաջվա հետ, բայց էլի դժվարա:*

Կին, Գյուղ Սարալանջ

**Նկար 4. Մշակման ենթակա գոմաղբ Զորավան գյուղում**

Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակից կանանցից մեկը պատմում էր, որ այս տարվա իրենց ամբողջ փայտը, կացինով կոտրատել, մանրացրել և դասավորել է իրենց 13 ամյա դուստրը: Իսկ հարցին, թե արդյոք տղա երեխա ունեն, կինը

պատասխանեց, որ ունեն տղա, սակայն տղան գրաֆիկ դիզայներ է, և իր բռնած ամենածանր բանը համակարգչի մկնիկն է: Բացի դա նա աչքերի հետ կապված առողջական խնդիր ունի և չի կարելի ծանրաբեռնել:

**Նկար 5. 13 ամյա աղջկա կողմից կոտրատված փայտը**

Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակից երիտասարդ աղջիկներից մեկը նույնպես նշեց, որ ամբողջ վառելափայտը ինքը և մայրիկն են կոտրատել, մանրացրել, դասավորել, քանի որ հայրիկը մահացել է: Կանանց ֆիզիկական առողջության վրա նման ծանրաբեռնվածության՝ ծանրություններ կրելու, կացնով կոտրատելու ռիսկերի վերաբերյալ առանձին առողջապահական ոլորտի հետազոտության կարիք կա:

Այստեղ հարցը պետք է համակողմանիորեն դիտարկել: Մի կողմից՝ կանայք իրականացնում են այնպիսի աշխատանքներ, որոնք տարբեր կարծրատիպերով համարվել են կնոջ համար անհասանելի և ծանր, ապացուցելով, որ գենդերային

հիմքով աշխատանքի բաժանումը իրական կյանքում չի գործում, և բազմաթիվ կանայք իրականացնում են այնպիսի աշխատանքներ, որոնք տարբեր խոսույթներում ներկայացվել են որպես բացառապես տղամարդկային աշխատանքներ: Մյուս կողմից, հետաքրքրական է այն, որ նույնիսկ այն աշխատանքները, որ տարբեր կարծրատիպերով համարվել են կնոջը ոչ բնորոշ, չվճարվող և խնամքի աշխատանքների համատեքստում միևնույն է իրականացնում են կանայք, այլ ոչ թե տղամարդիկ:

Չգազաֆիկացված գյուղերում փակոցները, պահածոները պատրաստվում են կամ վառարանի վրա, կամ բակում՝ օջախի կրակի վրա: Այս առումով նույնպես վառելափայտի առկայությունը կարևոր է: Կանայք նշում են, որ փակոցների համար կարող են նաև իրենց այգիների ծառերի էտած ճյուղերը օգտագործել որպես վառելիք:

**Նկար 6. Էտած ծառերի ճյուղերը որպես վառելիք Սարալանջ գյուղում**

## Վերջին տարիների նորույթը ջեռուցման ոլորտում քարածուխը և ինքնաշեն փայտի կաթսաներն են

Կանանց խոսքով, վերջին տարիներին որպես վառելիք մեծ տարածում է գտել քարածուխը: Կանայք այն համարում են էներգախնայող և մատչելի: Նշում են, որ քարածուխով ջեռուցումը շատ ավելի մատչելի է ստացվում, քան ներկայիս պայմաններում փայտով կամ գոմաղբով ջեռուցումը: Կանացից մեկը նույնիսկ նշել է, որ քարածուխով մեկից ավել անգամ հնարավոր է ջեռուցել, քանի որ դրանք պահպանում են իրենց ամբողջականությունը այրվելուց հետո:

**Նկար 7. Այրվող ածուխը վառարանում, գյուղ Բուժական**

Վերջին տարիներին տարածում են գտել նաև փայտի և աթարի կաթսաները, որոնք իրենցից ներկայացնում են կենտրոնացված ջեռուցման համակարգ, որը խողովակներով ջերմությունը համաչափ տարածում է ամբողջ տանը:

Սակայն, կանանց խոսքով, այս կաթսաները թեև հարմար են տունը ջեռուցելու համար, սակայն էկոլոգիական առումով վնաս են հասցնում շրջապատին: Քանի որ կաթսան տանը չէ տեղադրված, մարդիկ փայտից, գոմաղբից և քարածխից բացի, նաև գցում են պլաստիկ, հին շոր ու կոշիկ, անվադողեր: Կանանց խոսքով, անվադողերի ծուխը շատ տհաճ է և վտանգավոր առողջության համար: Նույնիսկ սպիտակ լվացքի վրա, սև մուր է նստում, եթե հարևաններից որևէ մեկը կաթսայում անվադող է այրում:

*Մեր հարևան Սվոյենք, ինչ ասես գցում են, հոտից խեղդվում եմ, բայց ինչ կարամ ասեմ, հիվանդ էլ երեխա ունեն, մարդիկ հնարավորություն չունեն, ձեռքի տակ ինչ ընկավ վառում են:*

Կին, Գյուղ Սարալանջ

Իսկ կանանցից մեկը, ով նաև համայնքապետարանում է աշխատում, նշեց, որ հաճախ մարդիկ հրաժարվում են աղբի գումարը վճարել, քանի որ իրենց խոսքով, իրենք աղբ չունեն: Նրանք իրենց աղբը այրում են կաթսաներում և վառարաններում, ինչը մեծ վնաս է շրջակա միջավայրին:

*Այրում են ոչ միայն անվադողեր, պլաստիկ, չորացած կարտոֆիլի կեղևներ, այլ նաև երեխաների տակդիրները: Դե պատկերացրեք ինչպիսի վնաս է դա շրջակա միջավայրին:*

Կին, Գյուղ Բուժական

## Կանայք նախընտրում են վարձատրվող աշխատանք կատարել և վճարել ջեռուցման համար, քան գոմաղբ մշակել

Զորավան համայնքը գազաֆիկացված է: Կանանց խոսքով, եթե 5 տարի առաջ մարդիկ նախընտրում էին փայտ և գոմաղբ վառել, ինքնուրույն զբաղվել գոմաղբի վերամշակմամբ, ապա այսօր շատերը անցել են գազով ջեռուցման: Գյուղը վաղուց է գազաֆիկացված: Կանանց խոսքով, նախ՝ փայտն է թանկացել,

անասնապահությամբ զբաղվող տնային տնտեսությունների թիվն է գնալով նվազում, և գոմաղբը նույնպես պետք է գնել, իսկ այս դեպքում փայտով և գոմաղբով ջեռուցման ծախսը հավասարվում է գազով ջեռուցելու գումարին:
Կանանց համար կարևորություն է ստացել նաև վարձատրվող աշխատանք կատարելու գաղափարը: Շատ կանայք նշել են, որ նախընտրում են կատարել որևէ վարձատրվող աշխատանք, քան այդ ժամանակը ծախսել վառելիք հայթայթելու և վերամշակելու վրա:
Կանանց համար կարևոր ասպեկտ է նաև հարմարավետությունը և մաքրությունը: Գազով ջեռուցումը նրանք համարում են հարմարավետ և մաքուր տարբերակ, որը չի վնասում տան վերանորոգումը, մաքրությունը և այլն:

*Օրինակ, որ ասում եք, 5 տարի առաջ, ես երբ էլի նորից գազ էի վառում: Ես շատ դժվարանում էի, խնայում էի, որովհետև աշխատանք չունեինք. տղաս չէր աշխատում, հարսս չէր աշխատում: Հիմա ես ընդհանրապես չեմ խնայում, որովհետև բյուջեի համար, աշխատում ենք, մտածում ենք որ պիտի օգտագործենք, էլի մեր համար ա, որ չհիվանդանամ, դեղին փող չտամ:*

Կին, գյուղ Զորավան

Սակայն, կանայք նշում են, որ թեև գազով ջեռուցվող տներում կանանց չվճարվող աշխատանքը պակասել է, և կանայք ստիպված չեն հսկայական ժամանակ ծախսել ջեռուցման հարցերը ապահովելու համար, այնուամենայնիվ դեռևս այդ ժամանակը չեն կարողանում լիարժեք վերածել արդյունավետ և վճարվող աշխատանքի, այլ հիմնականում անց են կացնում սոցիալական մեդիայում: Որպես դրական կողմ նշում են, որ խնայած ժամանակը ավելի շատ են կարողանում հատկացնել երեխաների և թոռնիկների դաստիարակությանը: Այս դեպքում, ֆեմինիստական տեսանկյունից, խնամքի կամ չվճարվող տնային աշխատանքների անհամաչափ բաշխումը, խոչընդոտում է կանանց զարգացմանը, տնտեսական հզորացմանը և անկախացմանը, քանի որ կանայք հնարավորություն չեն ունենում սովորել, աշխատել և անձնայի աճ ապահովել: Թվում է թե կենցաղի հեշտացումը պետք է բերի կանանց զարգացման հնարավորությունների ավելացման, սակայն կանանց

որոշակի ինստիտուցիոնալ աջակցություն է պետք նախկինի սովորությները և մտածելակերպը փոխակերպելու և ազատված ժամանակը ի օգուտ իրենց զարգացման կիրառելու համար: Ինստիտուցիոնալ աջակցությունը կարող է դրսևորվել իրազեկման արշավների, վերապատրաստումների, դասընթացների միջոցով:

## Կլիմայի փոփոխության այլ հետևանքների ազդեցությունը կանանց վրա

Որպես հավելյալ հետազոտական խնդիր, ուսումնասիրվել է նաև ընդհանուր առմամբ կանանց պատկերացումները կլիմայի փոփոխության և իրենց կյանքի վերաբերյալ դրա ազդեցության վերաբերյալ:

Նախ բոլոր քննարկումներում կանայք նշեցին, որ եղանակը տաքացել է և տեղումներն են պակասել: Մասնակիցներից մեկը նշեց, որ եթե նախկինում ծառերի էտը սկսում էին մայիսի վերջին, ապա վերջին տարիներին եղանակի տաքացման պատճառով, սկսում են փետրվարին:

Գյուղերում կա ոռոգման ջրի խնդիր, և տեղումների պակասը անդրադառնում է գյուղատնտեսական աշխատանքների վրա, ծառերը և բույսերը ժամանակին չեն ջրվում:

Կանանց խոսքով, վերջին տարիներին շատ է փոխվել բերքի որակը: Թե՛ ծառերի բերքը, թե ջերմոցային տնտեսությունների բերքը վերջին տարիներին բազմաթիվ խնդիրներ ունեն: Հատկապես տուժել է ընկուզենիների բերքը: Ներարկումները չեն օգնում: Ջերմոցներում բերքը սկսում է փչանալ, ծառերի բերքը նույնպես անհաջող է ստացվում:

Կանայք նշում են, որ հակակարկտային կայանների աշխատանքը բացասական հետևաքներ ունի բերքի վրա: Ցրելով ամպերը, ոչ միայն կարկուտն է կանխարգելվում, այլ նաև անձրևը, ինչը գյուղերի համար ոռոգման հիմնական աղբյուրներից մեկն է: Կանայք նաև նկատել են, որ կայանների արձակած կրակոցների ձայնը նույնպես բացասաբար է ազդում ծառերի վրա: Ծառերը կարծես վախենում են, ընկճվում, չորանում:

Կանայք որոշակի փոփոխություններ են տեսնում նաև վայրի հավաքի առումով: Նրանց խոսքով պակասել են դաշտերում աճող խոտաբույսերը, որոնք կանայք հավաքում և վաճառում են: Կանայք դա կապում են թրթուրների, միջատների շատացման հետ, որոնք կլիմայի փոփոխության պատճառով չափազանց շատ են բազմացել և ուտում են դաշտի բերքի մեծամասնությունը:

*Թրթուրը, մորեխները հնձում են, ավիրում են բանջարը, ուղղակի բան չի մնում:*

Կին, Գյուղ Սարալանջ

## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Հիմնվելով իրականացված հետազոտության վրա, առանձնացվել են հետևյալ հիմնական բացահայտումները:

- Կանայք շարունակում են զգալի դերակատարություն ունենալ տան ջեռուցման ապահովման հարցերում: Նախկինի համեմատ պակասել է օրինակ՝ անտառից թափուկներ կրելու պրակտիկան, սակայն պահպանվել են կուբամետրերով փայտ կոտրատելու, դասավորելու, գոմաղբ վերամշակելու պրակտիկաները, որոնք շատ ժամանակատար են և մեծ ֆիզիկական աշխատանք են պահանջում:
- Փայտի գնի բարձրացմանը զուգահեռ, աճել են նաև վնասակար իրերի այրման պրակտիկաները: Օրինակ՝ ինքնաշեն կաթսաներում անվադողերի այրումը, կենցաղային աղբի, այդ թվում՝ տակդիրների այրումը և այլն:

- Պակասել է նաև անտառից թույլատրելի թափուկներ և չորուկներ հավաքելու պրակտիկան, քանի որ անտառի սկզբնական հատվածի թափուկները արդեն հավաքված են, իսկ անտառի խորք հասնելը դժվար է, հատկապես մեքենա չունեցող կանանց համար:
- Կանայք մտավախություն ունեն ապագայում թե՛ փայտի, թե՛ գոմաղբի, թե՛ գազի և քարածուխի հասանելիության առումով, քանի որ դրանք ներկրվում են արտերկրից և յուրաքանչյուր պահի կարող է դադարեցվել ներկրումը:
- Արևային էներգիայի վերաբերյալ կանանց կարծիքը շատ դրական է, սակայն այն կարծես թե հասանելի չէ բնակչության խոցելի և աղքատ խմբերին: Նաև կա տեղեկատվության պակաս՝ դրա գնի, վարկերի պայմանների, տեխնիկական մանրամասների առումով:
- Կանայք միտված են էներգիան խնայելու, սակայն դա անում են ոչ թե էներգաարդյունավետ մոտեցումների կիրառմամբ, այլ պարզապես տան թերջեռուցման միջոցով, հաճախ խնայելով իրենք իրենց հաշվին:
- Կլիմայի փոփոխության այլ հետևանքները նույնպես կանանց անհանգստացնում են, մասնավորապես՝ ոռոգման ջրի խնդիր ունեցող համայնքներում անձրևների պակասը, հակակարկտային կայանների աշխատանքի պատճառով ծառերի վախենալը, վերջին տարիներին բերքի որակի անկումը և ներարկումների ցածր օգտակարությունը, դաշտերում վայրի բույսերի պակասելը՝ երկար տարիներ դրանք արմատախիլ անելու, ինչպես նաև կլիմայի փոփոխության հետևանքով միջատների աճի պատճառով, որոնք ուտում են բերքը:

## ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

| Ում է ուղղված | Առաջարկը | Հիմնավորումը |
|---|---|---|
| Կառավարություն և միջազգային կազմակերպություններ | ՀՀ գյուղական համայնքներում ներդնել արևային էներգիայի համայնքային կայաններ, որոնք հասանելի կլինեն բնակչության բոլոր շերտերին | Արևային էներգիայի կայանները բնակչության ոչ բոլոր շերտերին են ֆինանսապես հասանելի: Սա թույլ կտա մեծացնել մաքուր |

| | | |
|---|---|---|
| | | և վերականգնվող էներգիայից օգտվող անձանց թիվը |
| Կառավարություն և միջազգային կազմակերպություններ | Գյուղական համայնքներում, հատկապես խոցելի կանանց տրամադրել արևային կայաններ մասնակի փոխհատուցմամբ և/կամ արտոնյալ վարկային պայմաններով | Սա թույլ կտա մեղմել կլիմայի փոփոխության անհամաչափ հետևանքները կանանց վրա և հնարավորություն կտա ջեռուցել տունը մաքուր և վերականգնվող էներգիայով, անկախ ֆինանսական դրությունից |
| Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին | Մշակել և ջատագովել գյուղաբնակ կանանց՝ էներգաարդյունավետ ջեռուցման պրակտիկաներ ունենալու իրավունքը, կլիմայի անհավասար հետևանքների մեղմման հիմնավորմամբ | Սա թույլ կտա մեղմել կլիմայի փոփոխության անհամաչափ հետևանքները կանանց վրա և հնարավորություն կտա ջեռուցել տունը մաքուր և վերականգնվող էներգիայով, անկախ ֆինանսական դրությունից |
| Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին | Բնապահպանական ՀԿ-ների հետ համատեղ մշակել դասընթացներ և իրազեկման արշավներ, կանանց շրջանում էներգաարդյունավետ մոտեցումների վերաբերյալ գիտելիքները և իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: | Միջնաժամկետ հեռանկարում թույլ կտա կանանց մեղմել ոչ արդյունավետ ջեռուցման պրակտիկաների վնասակար հետևանքները, պրակտիկ լուծումների կիրառմամբ: |
| Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին | Բնապահպանական ՀԿ-ների հետ համատեղ դիմել Միջազգային ֆոնդերի, գյուղաբնակ խոցելի կանանց համար էներգաարդյունավետ ջեռուցման համակարգերի համար ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով: | Միջնաժամկետ հեռանկարում թույլ կտա կանանց մեղմել ոչ արդյունավետ ջեռուցման պրակտիկաների վնասակար հետևանքները, պրակտիկ լուծումների կիրառմամբ: |
| Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին | Բնապահպանական ՀԿ-ների հետ համատեղ մշակել մոդուլներ, դպրոցներում և ԲՈՒՀ-երում կլիմայի ոլորտում երիտասարդ աղջիկ առաջնորդների ձևավորման նպատակով: | Ապագայում թույլ կտա կլիմայի փոփոխության և էներգաարդյունավետության ոլորտում նպաստել գենդերային արդարության վերականգնմանը, կին առաջնորդների միջոցով: |

# ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄՈԴԵՐԱՏՈՐ՝

- Ներկայանում է և ներկայացնում է  քննարկման նպատակը
- Տեղեկացնում է ձայնագրող սարքի մասին, հավաստիացնում, որ տեղեկատվությունը պահպանվելու է կոնֆիդենցյալ, անանուն և օգտագործվելու է միայն վերլուծական նպատակներով
- Նշում է ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցների կարծիքի և անկեղծության կարևորությունը
- Ներկայացնում է ֆոկուս-խմբային քննարկման կանոնները
    - Չընդհատել մոդեռատորին և քննարկման մասնակիցներին
    - Տեսախցիկը միացրած պահել
    - Չհանրայնանել քննարկման ընթացքում հնչած տեղեկատվությունը
    - Չկան ճիշտ կամ սխալ պատասխաններ
    - Որևէ մեկի հայտնած կարծիքը քննադատության ենթակա չէ

1. Ինչպե՞ս է փոխվել ջեռուցումը վերջին 5 տարիներին:
2. Արդյո՞ք դուք խնայում եք վառելիքը: Եթե այո, ապա ինչու՞ և ինչպե՞ս: Եթե ոչ, ապա ինչու՞:
3. Ի՞նչ գործողություններ եք իրականացնում ձեր վառելիքի օգտագործումն ավելի արդյունավետ դարձնելու համար:
4. Մտահոգություններ ունե՞ք ապագայում որևէ վառելիքի հասանելի լինելու վերաբերյալ: Եթե այո՝ ապա ինչու: Եթե ոչ՝ ապա ինչու:
5. Նկարագրեք, թե ինչպես է իրականացվում Ձեր տան ջեռուցումը: Ինչպես եք Դուք մասնակցում ջեռուցման ապահովմանը:
6. Ի՞նչ մասնակցություն ունեք վառելիքի ապահովման գործում:
7. Մտահոգվա՞ծ եք Ձեր շրջակա միջավայրի և բնության ապագայի վերաբերյալ: Ինչպես է կլիմայի փոփոխությունը ազդել Ձեր կյանքի վրա:

8. Ի՞նչ գիտեք արևայինէներգիայով ջեռուցման մասին: Պատմեք խնդրում եմ Ձեզ հայտնի տեղեկությունները: Որքանո՞վ եք այն արդյունավետ համարում: Ի՞նչ առավելություններ և սահմանափակումներ եք տեսնում:
9. Արդյո՞ք ջեռուցման և սնունդ պատրաստելու համար վառելիքի օգտագործումը բացասական ազդեցություն ունի Ձեր և Ձեր ընտանիքի անդամների առողջության վրա: Եթե այո, ապա ինչպե՞ս կարող եք նվազեցնել այդ ազդեցությունը:
10. Արդյո՞ք այրում եք պլաստիկե, ռետինե կամ այլ պարագաներ Ձեր վառարանում: Եթե այո, ապա ինչու՞, ի՞նչ հաճախականությամբ և ինչ նպատակով:

# ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

**Կանայք կլիմայում ծրագիր**

**Փորձագիտական հարցազրույցի հարցաշար**

Բարև Ձեզ, Հայաստանում Կանանց հիմնադրամի կողմից տրամադրվող «Կանայք Կլիմայում» դրամաշնորհի շրջանակներում, իրականացվում է հետազոտություն, որի նպատակն է պարզել ՀՀ գյուղական համայնքներում կանանց մանակցությունը ջեռուցման ապահովման հարցերին:

Հետազոտության շրջանակներում փորձագիտական հարցազրույցներ ենք իրականացնում ոլորտի տարբեր դերակատարների հետ, համակողմանի պատկերը հասկանալու համար: Հետազոտության արդյունքում մշակվելու են առաջարկներ, գյուղական համայնքներում ջեռուցման պրակտիկաների բարելավման համար:

Նախապես շնորհակալ ենք Ձեր տրամադրած ժամանակի և մեր հետազոտությանը ձեր ներդրումն ունենալու համար:

1. Վերջին 5 տարում, ինչպե՞ս է փոխվել հասարակության վերաբերմունքը արևային ջրատաքացուցիչների և ջեռուցման պանելների նկատմամբ: Արդյո՞ք զգում եք իրազեկվածության աճ:
2. Իսկ ինչպե՞ս է փոխվել արևային ջրատաքացուցիչների և ջեռուցման պանելների վաճառքը: Արդյո՞ք կա առաջընթաց:
3. Արդյո՞ք ներկայումս արևային ջրատաքացուցիչները և ջեռուցման պանելները լայն տարածում ունեն Հայաստանում: Եթե ոչ, ապա որոնք են խոչընդոտները: Խնդրում եմ մանրամասն նշել:
4. Ունե՞ք արդյոք վիճակագրություն, թե Հայաստանի որ մարզերից և որ շրջաններից են ձեռք բերում Ձեր արտադրանքը:
5. Ավելի շատ գյուղերի՞ց թե քաղաքներից են ձեռք բերում: Ունե՞ք արդյոք հստակ վիճակագրություն:

6. Հատկապես որ շրջաններում և բնակավայրերում է Ձեր պրոդուկտի արդյունավետությունը բարձր: Խնդրում եմ մանրամասնել:
7. Ինչպիսի՞ն է գնորդների սեռային բաշխումը: Գնումը կատարողը ավելի շատ տղամարդիկ են թե՞ կանայք: Ունեք այս թեմայով վիճակագրություն:
8. Ո՞րն է լինում գնորդի հիմնական մոտիվացիան, ձեռք բերել արևային ջրատաքացուցիչներ և ջեռուցման պանելներ:
9. Ինչպիսի՞ն է գնորդների հետադարձ կապը: Որքանով են գոհ արևային ջրատաքացուցիչների և ջեռուցման պանելների աշխատանքից:
10. Արդյո՞ք արևային ջեռուցման պանելները դառնում են տան ջեռուցման միակ աղբյուրը:
11. Երբևէ ունեցե՞լ եք համագործակցություն որևէ միջազգային կազմակերպության հետ, որոնք ինչ որ չափով փոխհատուցել են իրենց շահառուների գնումը: Օրինակ՝ 50/50 տարբերակով: Եթե այո, ինչպես եք գնահատում այդ համագործակցությունը:
12. Համագործակցու՞մ եք արդյոք Ծրջակա միջավայրի նախարարության հետ: Ունեք համագործակցության որևէ ձևաչափ: Եթե այո, ինչպես եք գնահատում այդ համագործակցությունը: Արդյոք պետության կողմից արվում են համապատասխան քայլեր, ոլորտին աջակցելու ուղղությամբ: